ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.14. Գերմանիայի տնտեսությունը

• • •

Տնտեսական ցուցանիշներն ու զարգացման մակարդակը ցույց են տալիս, որ երկար ժամանակ է ինչ *ԳԴՀ-ն թևակոխել է զարգացման հետին-դուստրիալ փուլ:* Տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 70%-ը զբաղված է ծառայությունների ոլորտում, մոտ 25%-ը՝ արդյունաբերության և շինարարության, և միայն 2%-ը՝ գյուղատնտեսության մեջ:

ԳՏՀ դարաշրջանում գերիշխող դիրք են գրավել «ավանգարդային եռյակի» ճյուղերը՝ էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը: Գերմանիայի *վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը* կողնորոշված է դեպի սեփական քարածուխն ու գորշ ածուխը և ներկրվող նավթն ու գազը: *Էլեկտրաէներգիայի* արտադրության մեջ գլխավոր դերը պատկանում է ածխով աշխատող ջէկ-երին, զգալի դեր ունեն աէկ-ները (արտադրվող էլեկտրաէներգիայի 30%-ը): Հարավի լեռնային շրջաններում շատ են ջրաէլեկտրակայանները: Երկրում գործում են նաև արեգակնային, մակընթացային և հողմաէլեկտրակայաններ: Էլեկտրաէներգիայի արտադրությամբ Գերմանիան աշխարհում 6-րդն է՝ մոտ 600 մլրդ. կվտ. ժ.:

• • •

Ինտենսիվ ***բուսաբուծությունն*** զգալի չափով սպասարկում է անասնապահությանը կամ ինչպես ասում են բուսաբուծությունն «աշխատում է» անասնապահության համար: Հետևաբար բուսաբուծությունն ապահովում է ոչ միայն բնակչության պարենային կարիքները, այլև անասնապահության կերային բազան: Տիրապետող են ագարակային տնտեսությունները: Մշակաբույսերից առավել տարածված են ցորենը, գարին, կարտոֆիլը և շաքարի ճակնդեղը: Գերմանացիները սպառում են բարձրորակ սննդամթերք, որոնց որակը խստորեն հսկվում է պետության կողմից:

• • •

Առաջնակարգ դեր ունի ծովային տրանսպորտը, որն հիմնականում սպասարկում է արտաքին առևտուրը: Սակայն երկիրը առևտրական մեծ նավատորմ չունի և օգտվում է այլ երկրների («ծովային կառապանների») նավերի ծառայություններից: Խոշոր նավահանգիստներ են **Համբուրգը**, **Բրեմենը**, **Լյուբեկը**, **Ռոստոկը**, սակայն երկրի արտաքին առևտրի զգալի մասն իրականացվում է Նիդեռլանդների **Ռոտերդամ** նավահանգստով, որն ամենամեծն է աշխարհում (իսկ կոնտեյներային բեռնափոխադրումների ծավալով՝ **Սինգապուրը**): Տրանսպորտային խոշոր հանգույցներ են **Բեռլինը**, **Համբուրգը**, **Մայնի Ֆրանկֆուրտը**, **Քյոլնը**, **Հաննովերը**:

• • •

Առաջնակարգ դեր ունի ծովային տրանսպորտը, որն հիմնականում սպասարկում է արտաքին առևտուրը: Սակայն երկիրը առևտրական մեծ նավատորմ չունի և օգտվում է այլ երկրների («ծովային կառապանների») նավերի ծառայություններից: Խոշոր նավահանգիստներ են **Համբուրգը**, **Բրեմենը**, **Լյուբեկը**, **Ռոստոկը**, սակայն երկրի արտաքին առևտրի զգալի մասն իրականացվում է Նիդեռլանդների **Ռոտերդամ** նավահանգստով, որն ամենամեծն է աշխարհում (իսկ կոնտեյներային բեռնափոխադրումների ծավալով՝ **Սինգապուրը**): Տրանսպորտային խոշոր հանգույցներ են **Բեռլինը**, **Համբուրգը**, **Մայնի Ֆրանկֆուրտը**, **Քյոլնը**, **Հաննովերը**:

• • •

Գերմանիայի ***արդյունաբերությունը*** հասել է զարգացման շատ բարձր մակարդակի և ունի բարդ ճյուղային կառուցվածք, բազմաճյուղ է և բարձրակարգ տեխնիկայով հագեցած: Գերմանական արդյունաբերական ապրանքներն ունեն բարձր որակ և մեծ պահանջարկ: Երկրում հաշվվում է 56 հազար արդյունաբերական ձեռնարկություն, որտեղ աշխատում է 8,5 մլն մարդ: Արդյունաբերության բազային ճյուղերը՝ էներգետիկան, մետաղաձուլությունը, մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմուտքում:

• • •

Տրանսպորտը: Գերմանիայի ողջ տարածքը հագեցած է հաղորդակցության ուղիների տարբեր տեսակների խիտ ցանցով: Մի շարք ուղղութ-

յուններով գերակշռում են տրանսպորտի 4–5 տեսակներ: Օրինակ՝ **Հռենոսի** հովտով ձգվում են երկաթուղիներ, ավտոմայրուղիներ, խողովակաշարեր: Գետահովտի քաղաքները կապված են գետային, ինչպես նաև օդային տրանսպորտով: Դեռևս 2-րդ աշխարհամարտից առաջ Գերմանիան ուներ լավագույն ճանապարհների խիտ ցանցն աշխարհում: Այժմ էլ երկիրն ունի արագընթաց մայրուղիների խիտ ցանց և երկաթուղիներ, որոնցով գնացքները երթևեկում են ավելի քան 400 կմ/ժ արագությամբ:

• • •

Գերմանիայում գործում են 7000 մեքենաշինական ձեռնարկություններ, որոնք թողարկում են ավելի քան 17000 տեսակի արտադրանք: Տարեկան արտադրվող ավտոմեքենաների քանակով Գերմանիան զիջում է միայն ԱՄՆ-ին և Ճապոնիային:

• • •

Զարգացած են կաթնատու և մսակաթնատու տավարաբուծությունը, **բեկոնային խոզաբուծությունը** (բեկոն-խոզապուխտ) և **բրոյլերային թռչնաբուծությունը** (բրոյլեր-տապակայի ճուտ):

Գերմանիան ունի բարձր զարգացած ***ծառայությունների ոլորտ***՝ բանկային, ֆինանսական, ապահովագրական ծառայություններ: **Մայնի Ֆրանկֆուրտն** ու **Դյուսելդորֆն** աշխարհի ֆինանսական մայրաքաղաքներից են: Երկիրը կապիտալի խոշոր արտահանող է: Գերմանիան ունի լայն ճյուղավորված և սոցիալապես պաշտպանված *առողջապահության համակարգ*: Այսպես կոչված «**քաղաքակրթական հիվանդությունների**» (սիրտ-անոթային, ուռուցքածին ևն) կանխարգելման համար ամեն տարի վիթխարի միջոցներ են հատկացվում: Հայերը ևս ծանր հիվանդությունների բուժման համար նախընտրում են գերմանական կլինիկաները: